**Արձանագրություն N 2**

**ԱՔ- ԳՀԾՁԲ-26/31 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Արմավիր 01 հունիսի 2026թ.

ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լիանա Հայրապետյան

Հանձնաժողովի Գնահատող անդամներ՝ Հովհաննես Առաքելյան, Սյուզաննա Իսախանյան

Բացող անդամներ՝ Իրինա Գալստյան, Օքսաննա Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Սադաֆ Զորաբյան

## 1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>

**(Լիանա Հայրապետյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ԱՔ-ԳՀԾՁԲ-26/31 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին,
3. Ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերի մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0***

## 2. <u>ԱՔ-ԳՀԾՁԲ-26/31 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման Ընթացակարգի հայտերի բացման մասին</u>

**(Լիանա Հայրապետյան)**

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հասցե, Հեռախոս | Էլ. Փոստի հասցե |
|---|---|---|---|
| 1 | «Վանտեխ» ՍՊԸ | Արարատի մարզ, ք. Արտաշատ, Անդրանիկի փ. 7, Հեռ.՝ 093557381 | vanik.harutyunyan.45@mail.ru |
| 2 | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14, Հեռ.՝ 043600090 | gritig@inbox.ru |
| 3 | «Վերտիկալ» ՍՊԸ | ՀՀ գ. Շիրակի մարզ, գ. Լուսաղբյուր 3-րդ փ., 14տ., Հեռ.՝ 099165858 | vertikale.llc@gmail.com |
| 4 | «Սուար» ՍՊԸ | Ք. Երևան, Շենգավիթ ՎՇ, Բագրատունյաց 15-54, Հեռ.՝ 094305353 | suro4350@gmail.com |
| 5 | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | Ք. Երևան, Մ. Մաշտոցի պող., 60Շ. 6գր., Հեռ.՝ 093741188 | ascontrol.llc@gmail.com |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## <u>3. Ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին</u>

**(Լիանա Հայրապետյան)**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են, բացառությամբ **«Վանտեխ» ՍՊԸ-ի, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի**, մասնավորապես **«Վանտեխ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված է 1 հոգուց բաղկացած աշխատակազմ, այնինչ պետք է լինի առնվազն 2 հոգուց բաղկացած, ինչպես նաև կցված չեն ներկայացված աշխատակցի գրավոր համաձայնությունը իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին, ներկայացված աշխատակցի անձնագրի, որակավորումը հավաստող փաստաթղթերի (անձնագիր, դիպլոմ, հավաստագիր և այլն)

պատճենները, ինչպես նաև նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր, **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է հավելված 1.3 (աշխատանքային ռեսուրսներ):

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ **«Վանտեխ» ՍՊԸ-ի, «Սուար» ՍՊԸ-ի, «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ի,** մասնավորապես՝ **«Վանտեխ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Դիմում-հայտարարության վրա իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը բացակայում է, **«Սուար» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Դիմում-հայտարարության վրա իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է, **«ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Դիմում-հայտարարության վրա իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է :

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 4. Անհամապատասխանությունները շտկելու մասին

(Լիանա Հայրապետյան)

**Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշեց.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով ծանուցել **«Վանտեխ» ՍՊԸ-ին, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին, «Սուար» ՍՊԸ -ին, «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ին** որոնք պետք է ներկայացնեն շտկված փաստաթղթերը մինչև 03.06.2026թ. 12:00-ն ներառյալ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

## 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Լիանա Հայրապետյան)

ԱՔ-ԳՀԾՁԲ-26/31 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հունիսի 03-ին ժամը 12:00-ին Արմավիրի համայնքապետարան, ք. Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0***

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լիանա Հայրապետյան

անդամներ՝ Հովհաննես Առաքելյան

Սյուզաննա Իսախանյան

Իրինա Գալստյան

Օքսաննա Պետրոսյան

Քարտուղար՝ Սադաֆ Զորաբյան